ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/01

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Բարվա» ՍՊԸ-ի 26.04.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը, ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. **«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը 12.04.2017թ. հայտարարել է հրավեր և հայտարարություն/ծածկագիր՝ ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 / GSM/GPRS/ մոդեմով կառավարող տպասալիկների ձեռքբերման նպատակով: Բացման օր է սահմանվել 26.04.2017թ. ժամը 12:00:

Գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշվել են խտրական, ոչ մրցակցային պայմաններ, մասնավորապես «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից արտադրված հակակարկտային կայանների կառավարման համակարգերում օգտագործվող **ծրագրային** ապահովման գործիքները, ինչպես նաև սահմանվել է մոդեմի մակնիշ **/LGT-5 DUAL SIM/**, առանց **կամ համարժեք** նշման, որոնք որևէ կերպ կապ չունեն գնման առարկայի/տպասալերի/ հետ:

Նման կերպով սահմանվել են մասնավորապես տեխնիկական բնութագրի մի մեծ բաժին **ծրագրային ապահովում** ենթավերնագրով, որտեղ փաստացի նշված են գնման առարկայի հետ ոչ մի կապ չունեցող, արհեստական ձևական պայմաններ:

Ընկերությունը առավել մանրամասնելով վերը շարադրվածը անդրադարձել է հրավերի տեխնիկական բնութագրի որոշ կետերի, մասնավորապես.

• բնութագրի 16, 17, 18 և 19 կետերում նշվել է.

«16. Դիտարկման ռեժիմում պետք է հնարավոր լինի քարտեզի վրա տեսնել կայանների տեղակայման վայրերը,

17. Որպես քարտեզ պետք է օգտագործվեն google maps, google satellite, openstreetmap կամ այլ նմանատիպ քարտեզներ,

18. Քարտեզի վրա տեղադրված կայանների նշապատկերները պետք է գունային ազդանշաններով ցուցադրեն կայանի կարգավիճակը,

19. համապատասխան լիազորության դեպքում օգտատերը պետք է կարողանա քարտեզի վրա ընտրել մեկ կամ մի քանի խումբ կայաններ, նշել պարբերությունների քանակը և տալ կրակելու հրահանգ:»:

Ընկերությունը նշել է, որ հարց է առաջանում, թե ինչ կապ ունեն նմանատիպ քարտեզագրային սահմանումները հակակարկտային կայանների վրա տեղադրվող և բուն կայանի աշխատունակությունն ապահովող գնման <u>առարկա հանդիսացող տպասալերի</u> հետ:

• բնութագրի 20, 21 և 23 կետերը սահմանում են հետևյալը.

«20. Համակարգը պետք է ունենա աղյուսակային դիտարկման գործիք, որում կցուցադրվեն տվյալ օգտատիրոջը հասանելի բոլոր կայաններն իրենց մանրամասն տվյալներով, մասնավորապես՝ մարտկոցի լարում, գազի ճնշում բավարար շեմ, տվյալների վերջին թարմացում և այլն,

21. Աղյուսակային դիտարկման ռեժիմից նույնպես պետք է հնարավոր լինի իրականացնել կայանների կառավարում,

23. Ծրագրային համակարգում պետք է առկա լինի հատուկ տիրույթ (գործիք), որում իրական ժամանակում կցուցադրվեն կայաններից ստացվող տագնապի և ծանուցման ազդանշանները՝ անկախ նրանից, թե որ դիտարկման ռեժիմում է գտնվում օգտատերը:»:

Ընկերությունը գտնում է, որ հստակ է, որ նշված կետերը նույնպես որևէ կապ չունեն գնման առարկայի հետ և ըստ էության Պատվիրատուն հայտարարել է ծրագրային ապահովման մրցույթ այլ անվան տակ:

Ընկերությունն ավելնորդ չի համարել նշել, որ համեմատելով մանրամասն ներկայացված վերոհիշյալ կետերը Լոկատոր ՓԲԸ կողմից արտադրվող Լոկատոր-ՀԱԳ 120 հակակարկտային կայանի օգտակար մոդելի արտոնագրի 442Ս հետ կտեսնենք տառացի համընկնում հրավերով պահանջված տեխնիկական բնութագրի գրեթե բոլոր կետերի հետ:

Ընկերությունը ներկայացված բողոքով գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, քանի որ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Ընկերությունը նշել է, որ տվյալ դեպքում գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները:

Ընկերությունը բողոքով մեջբերել է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, մատնանշելով, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Տվյալ դեպքում Պատվիրատուն հրապարակել է հրավեր, որում առկա է եղել մի տեխնիկական բնութագիր, ինչը ըստ էության ամբողջությամբ չի համապատասխանում

նշված սկզբունքներին և առհասարակ «Գնումների մասին» ՀՀ օրենքին վերը նշված հիմնավորմամբ: Ըստ Ընկերության դիտարկման այն համապատասխանում է կոնկրետ արտադրողի տեխնիկական պայմաններին, որոնք միանգամայն անհասկանալի է, թե Պատվիրատուի մոտ որտեղից է հայտնվել, և ինչու է վերջինս ի սկզբանե լինելով ենթադրյալ օբյեկտիվ գնման մրցույթ անցկացնող, հրապարակել նման տեխնիկական բնութագրով:

Ընկերությունը, որպես բողոքի իրավական հիմք, վկայակոչել է Օրեքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Փոփոխել 12.04.2017 թվականի մրցույթ հայտարարելու գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշումը կամ

2. Պատվիրատուին պարտավորեցնել չկայացած հայտարարել ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով գնման ընթացակարգը:

Խորհրդում 04.05.2017թ. ժամը 15:00-ին N ԳԲԽ-ԷՍ-2017/01 բողոքի քննության նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Վահագն Գասպարյանը բողոքը պնդել է ամբողջությամբ:

2. <u>ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը 05.05.2017թ. Խորհրդին է ներկայացրել ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 04.05.2017թ. Խորհրդին ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքում նշված գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշվել է խտրական ոչ մրցակցային պայմաններ և սահմանվել է մոդեմի մակնիշ LGT 5dual sim առանց կամ համարժեքը նշման, սակայն հանձնաժողովը միտում չի ունեցել հղում կատարելու «Լոկատոր» ՓԲԸ-ին կամ նրա արտադրանքին, իսկ երկրորդ կետը համարում ենք հիմնավոր, ինչը հանձնաժողովի կողմից եղել է բացթողում:»:

Խորհրդի նիստին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետ ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-կենտրոնի պետ Սուրեն Հովսեփյանը և նյութատեխնիկական ապահովման ծառայության պետ Արմեն Բուռնուչյանը: Սուրեն Հովսեփյանը նիստի ընթացքում Խորհրդին հայտնեց, որ Պատվիրատուն պատրաստվում է չեղյալ հայտարարել ընթացակարգը, քանի որ գնման առարկայի ձեռքբերման անհրաժեշտությունը վերացել է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց խոստացել են այն նվիրել:

Պատվիրատուի ներկայացուցիչները ընդունեցին, նաև որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով նախատեսված պահանջների խախտմամբ, մասնավորապես գնման առարկայի հատկանիշը պարունակում է ֆիրմային անվանում և մոդել և չի պարունակում «կամ համարժեք» արտահայտությունը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԷՍ-2017/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հանձնաժողովի կողմից 2017 թվականի ապիրլի 12-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված N ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ հրավեր): GSM/GPRS մոդեմով կառավարող տպասալիկների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը, որը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը և որի նախագիծը ներկայացված է հրավերի N 6 հավելվածում:
2. Հանձնաժողովի դիրքորոշումը:
3. Խորհրդի նիստի ընթացքում Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կողմից արտահայտած կարծիքները և դիրքորոշումները:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուդը ուսումնասիրել է «Բարվա» ՍՊԸ-ի 26.04.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի ներկայացրած փաստաթղթերը, N ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերը, Պատվիրատուի ներկայացուցիչների ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը, N ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի կողմից 04.05.2017թ. Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը.

ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետ ծառայություն» ՊՈԱԿ-ը GSM/GPRS մոդեմով կառավարող տպասալիկների ձեռքբերման նպատակով 12.04.2017թ. հայտարարել է N ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ապրանքի անվանումը» սյունակում որպես գնման ենթակա առարկա նշվել է «Կառավարող տպասալիկ GSM/GPRS մոդեմով LGT 5 DUAL SIM» ապրանքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 12-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքի քննության ընթացքում հանձնաժողովը և Պատվիրատուի ներկայացուցիչները ընդունել են, որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը

կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով նախատեսված պահանջների խախտմամբ, մասնավորապես գնման առարկայի հատկանիշը պարունակում է ֆիրմային անվանում և մոդել և չի պարունակում «կամ համարժեք» արտահայտությունը:

Հանձնաժողովը 04.05.2017թ. Խորհրդին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է նաև, որ բողոքում նշված գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշվել է խտրական ոչ մրցակցային պայմաններ և սահմանվել է մոդեմի մակնիշ LGT 5dual sim առանց կամ համարժեքը նշման, սակայն հանձնաժողովը միտում չի ունեցել հղում կատարելու «Լոկատոր» ՓԲԸ-ին կամ նրա արտադրանքին:

Բողոքի քննության նպատակով 04.05.2017թ. ժամը 15:00 տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ Պատվիրատուն պատրաստվում է չեղյալ հայտարարել ընթացակարգը, քանի որ գնման առարկայի ձեռքբերման անհրաժեշտությունը վերացել է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց խոստացել են այն նվիրել:

Խորհրդի պահանջով Պատվիրատուի ներկայացուցիչները խոստացան մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելը՝ Խորհրդին ներկայացնել ընթացակարգը չեղյալ հայտարարելու մասին որոշումը, սակայն նշված որոշումը Պատվիրատուի կողմից Խորհրդին չներկայացվեց:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով սահմանված պահանջները:

Խորհուրդը գտնում է նաև, որ «Բարվա» ՍՊԸ-ի 26.04.2017թ. ներկայացրած բողոքի 1-ին կետում նշված՝ «Փոփոխել 12.04.2017 թվականի մրցույթ հայտարարելու գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշումը» պահանջն առարկայազուրկ է, քանի որ բողոքի 2-րդ կետով նշված պահանջով Ընկերությունը խնդրել է Խորհրդին՝ «Պատվիրատուին պարտավորեցնել չկայացած հայտարարել ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով գնման ընթացակարգը»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բարվա» ՍՊԸ-ի 26.04.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել N ՀՊՀ-ՊԸԱՊՁԲ-17/03 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2017թ. ապրիլի 12-ի ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետ ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից GSM/GPRS մոդեմով կառավարող տպասալիկների ձեռքբերման նպատակով պարզեցված ընթացակարգ հայտարարելու մասին N 1 որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ